№ 73 ՇԱԲԱԹ, 3 ԱՊՐԻԼԻ

1910

ԵՐԵՍՈՒՆՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՇԱԲԱԹ, 3 ԱՊՐԻԼԻ № 73

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.

Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ» Сергіевская ул., № 5.
Կամ Tiflis, Rédaction «Mschak».

Խմբագրատան տէլէֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 20 կոպէկ.

Տպարանի տէլէֆօն № 228

ՄՇԱԿ

Հասցէն. ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ». TIFLIS. Rédaction «MSCHAK».

Յայտարարութիւնների համար վճարում են. 1 երեսի վրա իւրաքանչիւր տողատեղին 20 կոպ., վերջին երեսի վրա՝ 10 կոպ.: Կովկասից դուրս յայտարարութիւնները ընդունվում են բացառապէս Торг. Домъ „Л. и Э. Метцль и К°“ ֆիրմայի միջոցով՝ Մոսկվայում, Պետերբուրգում և Վարշավայում:

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

ԱՊՐԻԼԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՒ ՏԱՐՎԱՑ ՎԵՐՋԸ 8 ՌՈՒԲԼԻ

12 ամսվ.՝ 10 ռ., 6 և 7 ամսվ. 6 ռ., ամսակ. 1 ռ. Ամերիկա՝ տարեկան 6 դոլլար, Եւրոպա՝ 32 ֆր., Պարսկաստան՝ 10 ռ., Թիւրքիա՝ 120 ղրուշ:
Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նահեւ հին հասցեն, նոյնպէս և 40 կոպ. (կարելի է և նամակագրոշմով):

Վաղը, կիրակի, ապրիլի 4-ին Խօջիվանքի գերեզմանատան ս. Աստուածածնի եկեղեցում տեղի կունենայ պատարագ և ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ—հանդերձ օրհնութեամբ արձան-մատուռի՝ հանգուցեալ

Բժշկապետ

ԵԳՈՐ ՍԵՐԳԷԵՎԻՉ ԲԱԲԵԱՆԻ,

որի մասին խորին վշտով յայտնում է հանգուցեալի այրին: Պատարագի սկիզբը առաւօտեան ժամը 11-ին: 372. 1—1

Կովկասի Հայոց Բարեգործական Ընկերութեան Խորհուրդը յայտնում է, որ ապրիլի 3-ին, շաբաթ, առաւօտեան ժամը 12-ին Մողնու եկեղեցում նշանակված է

Հանգուցեալ բարերար

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԽՈՒԴԱԴԵԱՆԻ

ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏԸ

(ու. շ.) 371. 2—2

ՎՐԱՑ ԱԶՆՈՒԱԿԱՆՆԵՐԻ ԹԱՏՐՈՆ

Կիրակի, ապրիլի 4-ին ✦ ՀՐԱԺԵՇՏԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

ՊԱՐՍԻՑ ՊԱԼԱՏԱԿԱՆ ԱՐՏԻՍՏ ՐՕԲԻԼՐՏ ԼԷՆՑԻ

Մասնակցութեամբ ԷԼԷՕՆՈՐԱ ԼԷՆՑԻ

Հետաքրքրաշարժ նոր ծրագիր՝ բաղկացած 3 բաժանմունքից.

Առաջին անգամ—ԹՌՉՈՂ ԱԹՈՌ և ՊԱՐՈՂ ՀԱՄԱՐԱԿՈՒԹԻՒՆ

Երկրորդ անգամ—ՑԻԳԱՆԱԿԱՆ ԵՐԳԵՐ և ՐՕՄԱՆՍՆԵՐ, միանգամայն նոր ծրագրով, կը կատարէ Ռ. ԼԷՆՑԻ դուստրը՝

M-lle ԶԻՆԱ ԼԷՆՑ

Սկիզբը եր. ժամը 8½-ին: Տոմսակները ծախվում են: Մանրամասնութիւնները աֆիշներում: (առ.) 360. 1—1

ԷՍ, ԱՆՆԱ ՉԻԼԼԷԱԳ,



ամենագրել եմ իմ անսովոր երկար (185 սանտիմէտր երկար.) մազերս—որ յիշեցնում է Լօրելէյի մազերը—շնորհիւ իմ հնարած առանձին պօմադայի 14-ամսեայ ԳՈՐԾԱԾՈՒԹԵԱՆ: Այդ պօմադան ճանաչված է լաւ միջոց մազերը թափվելու դէմ, միևնոյն ժամանակ նպաստում է նրանց աճման և արտասների ամրացման: Տղամարդիկ, շնորհիւ այդ պօմադայի, ունենում են խիտ և ճոխ երկար միրուք, նոյնպէս և (մինչև անգամ կարճ ժամանակեայ գործածութիւնից յետոյ) գլխի մազերի և միրուքի խկական փայլ: Միևնոյն ժամանակ պօմադան պահպանում է մազերը շուտ ճերմակելուց, նոյնիսկ ծերութեան ժամանակ:

Բանկայի գինը

3 եւ 5 ռուբլի

Գլխաւոր պահեստը՝ Кавказское Т-во Торговли Аптекарскими товарами, Թիֆլիսում, Բագուում և Բաթումում. (շ. հ.) 85 (առ.). 25—21

ԳՈՎԿԱՍԵԱՆ ԸՆԴԵՐՈՒԹԻՒՆ ԴԵՂԱՏԱՆ ՄԹԵՐՔՆԵՐԻ Ա. ՌԵԻՏՐԻ ԹԻՖԼԻՍ, ԲԱԳՈՒ, ԲԱԹՈՒՄ.

Adresse Télégraphique ANITAS

Адресъ Телеграммъ САНИТАСЪ Тифлисъ

ՆՈՐՈՒԹԻՒՆ

Ստացված է ԿՕՆՅԷԿՏ «ԼԱԿՍԻՆ»: ԼՈՒՅՕՂԱԿԱՆ՝ լէպէշկաների ձեով, միանգամայն դուրեկան. նուրբ, ՍԱԿԱՅՆ ԻՍԿԱԿԱՆ ՄԻՋՈՑ. ԱՆՎՆԱՍ է նոյնիսկ մշտական գործածութեան ժամանակ:

(առ.) (շ. ու.) 381. 2—1

ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅՈՒՀԵԱՑ ԲԱՐԵԳ. ԸՆԿ. ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ

խոնարհաբար խնդրում է Ընկ. մեծարգոյ անդամներին շնորհ բերել

ՏԱՐԵԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ

որ տեղի է ունենալու կիրակի, ապրիլի 4-ին, առաւօտեան ժամը 11½-ին Ընկերութեան կը ու ձեի դպրոցում (Գանձակայա, 19):

Օրակարգ՝ հ.
1) Ընկերութեան երեսփոխ հաշիւը և Վարչութեան 1909 թ. գործունէութիւնը:
2) 1910 թ-ի նախահաշիւը:
3) Ընտրութիւններ:

Նոյն օրը, նոյն տեղում, առ. ժամը 10-ից ցուցադրված կը լինեն և կը վաճառվեն կը ու ձեի դպրոցի, գլխարկների ու գուլպայագործութեան արհեստանոցների գործերը՝ իւրկաներ, գեղեցիկ բլուզկաներ, սրբիչներ, գլխարկներ, գուլպաներ, ժիլետներ մեծերի ու փոքրերի և այլ գործուածքներ: 380. 1—1

ԹԻՖԼԻՍԻ ՎԱՃԱՌԱԿԱՆՆԵՐԻ ԱՌԱՋ

Ա.Ր. Ն. ՄԻԼՕՎԸ

հրաւիրում է այն անձերին, որոնք կը կամենան ստանձնել Թիֆլիսի վաճառականութեանը պատկանող հողաբաժնի վրա գտնվող շինութիւնները քանդելու գործը: Հողաբաժինը գտնվում է IV քաղաքամասում, Բէհբուդեան փողոցի վրա, № 50:

Քանդելու գործի մանրամասն պայմանները կարելի է տեսնել Վաճառականական կամէրայում, Արմենական բաղաս, Բօրսային շինութեան մէջ, առաւօտեան ժամը 10-ից մինչև ցերեկվայ ժամը 2-ը:

(չ. շ.) (առ.) 363. 2—2

ԱՆԱԹԷՄԱ

Անաթէման՝ խեղճ ու անճար՝
Դուռն էր բաղխում յաւերժի,
Նա հրեշտակին թող «ЗЕФИРЪ» տար,
—10 հ. 6 կ.
Տեսնէր նորից կը ժերժի:
Թէկուզ «Казбекъ», «Браво», «Араксъ»
—10 հ. 3 կ.
Կամ «Деликатныя», «Марсъ» և «Другъ»
—10 հ. 5 կ.
Եւ, անպայման, քաջուց արագ
Բաց կը լինի դուռը вдругъ.

Եթէ Ռօզան ծանօթ լինէր
Մեր «Восходъ»-ին հոտաւէտ,
—10 հ. 5 կ.
Նա չէր թողնի տունն աւեր
Ինքը փախչի ուրիշի հետ:

Այժմ Լէօնիդ Անդրէեվը
Շատ է ծխում մեր «Прима»-ն,
—25 հ. 30 կ.
Եւ գրելու նրա ձեր
Կը լաւանայ անպայման:

ԾԽԱԽՈՏԻ ԳՈՐԾԱՐԱՆ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՕԱՆ „ԷՂԲ. ՍԷՅԼԱՆՈՎՆԵՐ“

(Ե. հ. կ.) (առ.) 155. 25—24

ԳՐԱԿԱՆ-ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ՍԱԼՕՆ

(«Աղբիւր-Տարազին» կից)

Երեքշաբթի, ապրիլի 6-ին

Երաժշտագէտ Մ. ԵԿՄԱԼԵԱՆԻ յիշատակին ժամվան V-ամեակի առիթով կը կայանայ Գրական-երաժշտական

ՀԱՆԴԷՍ

Մասնակցութեամբ օպերային նուագախմբի, երգչուհիների, երգիչների և երաժշտասէրների: Երաժշտագէտ ՅՈՎՍԷՓ ՏԷՐ-ԴԱՎԹԵԱՆ կը խօսէ ԵԿՄԱԼԵԱՆԻ մասին, որոշելով նրա կոչումը, դերը համաշխարհային երաժշտ. ընտանիքի մէջ:

ՕԳՆՈՒԱՑԻՆ ՆՈՒԱԳԱԽՄԻՐԸ, իտալացի երաժշտագէտ Ա. Ա. ՊՐԻՎԷՏԷՐԱՑԻ ղեկավարութեամբ կը նուագէ, հայերիս համար բոլորովին նորութիւն, պատարագից կտորներ: Երգեցիկ խումբը, ղեկավարութեամբ երգիչ Մուրադեանի, օպերային նուագախմբի հետ կերգէ «Հայր մեր», «Սուրբ, Սուրբ» և այլն: Երիտասարդ դաշնակահարուհի օր. Մատլէն Բուդղանեան կը նուագէ Եկմալեանի Nocturne, երիտասարդ երգչուհի Մարիամ Սոխակեան-Սօլովեան կերգէ Եկմալեանի յիշատակին ձօնված երգ և այլն:

Յիշողութիւններ Եկմալեանի շուրջը և զրույց Երուանդ ex-վարդապետի «Հայաս. եկեղ. բարեփոխ.» առիթով:

Մուտքը՝ արուեստագէտների, գեղագէտների, գրականագէտների, լրագրողների, ուսուցիչների և նրանց ընտանիքների համար 50 կ., հոգևորականների՝ 1 ռ. և կողմնակի անձանց համար 2 ռ.:

Ցանկացողները պէտք է վաղօրօք ապահովեն իրանց մուտքի տոմսակով, որովհետև տոմսակների թիւը սահմանափակ է:

Սկիզբը երեկոյեան 8¼ ժամին:

Դ ա ն օ թ.—Երեքշաբթի օրվանից մուտքը անխիլիր ամենքի համար ԵՐԵՔ ՐՈՒԲԼԻ:

Մանրամասն ծրագիրը լոյս է տեսնում «Տարազի» № 3-ում, որ նուիրված է երաժշտագէտ Մ. Եկմալեանի յիշատակին:

Տնօրէն՝ Տ. Նագարեան

(շ. հ.) (առ.) 376. 2—1

ՊԱՍՏԱՌՆԵՐ

(ՕԲՕՒ)

ԵՂԲ. ՏԱՐՆՕՊՕԼ

ՖԱԲՐԻԿԱՅԻ

8 կ. սկսած մինչև 6 ռ. իրաքանչիւր փաթեթը (ռուլօ):
Ունի պահեստներ Թուրքիայի բոլոր մեծ քաղաքներում:

ԲԱԺԱՆՄՈՒՆՔԸ ԹԻՖԼԻՍՈՒՄ

Գօլովինսկի պր., 21, Երոխա. Ընկ. շինութ.

Տէլէֆօն № 355.

ԳՆԵՐԸ ՖԱԲՐԻԿԱՅԻՆ

ՆՄՈՒՇՆԵՐԸ ԶՐԻ

(հ.շ.) (ա.) 310. 50—5

Թիֆլիսի Ժողովարան

Այսօր, շաբաթ, ապրիլի 3-ին տեղի կունենայ

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԵՐԵԿՈՅԹ

Երեկոյթին կը նուագեն ՍԱԶԱՆԴԱՐՆԵՐ:

Հիւրերը՝ ընդհանուր հիմունքների համաձայն՝ մուտքի համար վճարում են 1 ռուբ.:

(առ.) 376. 1—1

ԲԺԻՇԿ

Գ. Յ. ՄԵԼԻՔՈՆԵԱՆ

Ներքին եւ վիրաբուժական (խիրուրգ.) հիւանդութիւններ.

Ընդունելութիւնը (առաւօտեան ժ. 11—1. (երեկոյեան ժ. 5—7.

Երևանեան հրապարակ—Գուշչինսկ. փ., № 1.

(Ե. հ. է.) (առ.) 1045. 100—80

ԱՐԴԻՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՈՅԺԵՐԸ

— Պէտք է հաշտվել հարկերի ծանրութեան հետ, — ասաց Ֆինանսների մինիստրը Պետական Խորհրդում,— որովհետև պետութիւնը անհրաժեշտ և անխուսափելի ծախքեր ունի անելու: Միայն այդ ծախքերը պէտք է անվեն կանոնաւոր և արդիւնաբար:

— Հարկերի ծանրութիւնը չափազանց թեքված է դէպի զիւղական դասակարգը, - կշտամբեցին Խորհրդի մի քանի ճառախօսներ:

— Անհրաժեշտ է գրաւել եւրոպական դրամագլուխներ, — նկատեցին Վիտէ և ուրիշներ:

Այդ երեք տեսակ յայտնութիւնների մէջ պատկերանում է ֆինանսների ներկայ դրութիւնը:

Փող է հարկաւոր:

Որտեղից գտնել նրան:

Պատասխան. — հարկերից և օտար դրամատէրերից:

Բայց հարկերը ծանրաբեռնում են ժողովրդին. իսկ օտար դրամագլուխները վերջ է վերջոյ պարտքեր են, որոնց պէտք է յետ դնի երկիրը իր ամբողջութեամբ:

Այո, պարտքեր են. բայց եթէ նրանք խելացի և արդիւնաշատ կերպով են գործադրվում, կարող են առաջացնել բեղմնաւոր արդիւնքներ: Նրանք կը ստեղծեն նոր կուլտուրական ձեռնարկութիւններ, որոնք կը բանան աշխատանքի աղբիւրներ ազգաբնակութեան համար, եռուն շարժման մէջ կը դնեն երկրի քնած արդիւնաբերական ոյժերը և, հանդէս բերելով նոր հարստութիւններ, կը նպաստեն պետութեան ֆինանսական զօրութեան ամրանալուն:

Դրամագլուխները՝ լինեն նրանք օտար թէ սեփական՝ կը մտնեն արդիւնաբերութեան մէջ եռանդուն և համարձակ կերպով այն ժամանակ, երբ նրանք յոյս ունեն, որ շրջապատող պայմանները կատարելապէս նպաստաւոր են նրանց գործունէութեան համար, երբ նրանք ենթակայ չեն այնպիսի պատահականութեան, որը արդիւնք է օրէնսդրական և վարչական թերութիւնների, երբ ձեռնարկութիւնների բաղդը չէ դառնում խաղալիք՝ քմահաճոյքների ձեռքին:

Թէ հարկերի ծանրութեան, թէ դրամագլուխների գերութեան դէմ մաքառելու զօրաւոր միջոցներ են՝ բարձրացնել երկրի արդիւնաբերական ոյժերը և բեղմնաւորել մասսայի աշխատանքը իր բոլոր արտայայտութիւնների մէջ:

Անտարակոյս՝ հարկերի ծանրութիւնը կարելի է որոշ չափով վերացնել դասաւորելով նրան աւելի խելացի կերպով և թեթևացնելով բեռը աւելի անապահով դասակարգերից: Եւ այդ պէտք է անել անհրաժեշտօրէն: Բայց էական հեռանքների հասնելու համար անհրաժեշտ է երկրի ընդհանուր հարստութեան զօրաւոր աճումը և նրա կուլտուրական ընդունակութիւնների ընդարձակ զարգացումը:

Եւ Ռուսաստանը սպասում է, որ նրա ներկայացուցչական հիմնարկութիւնները իրանց կողմից նպաստեն մեծագործ ձեռնարկութիւններով նրա կուլտուրական վերանորոգութեան: Սպասում է:

Ա. Քալանթար

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Պետերբուրգ, 1 ապրիլի

Կոնստանտինօվի արտիլերիական դպրոցը այցելելուց յետոյ Կայսրը գնաց Անիչկով պալատը, ուր բարեհաճեց նախաճաշել, իսկ ժամը 2 և 30 րօպէին մեկնեց Ցարսկօէ Սէլօ:

Ճանապարհների հաղորդակցութեան մինիստրութեանը կից կազմված առանձին խորհրդակցութիւնը անհամեմատ յարմար գտաւ Կովկասեան լեռնաշղթայով կառուցվելիք երկաթուղու ուղղութիւնը Արխօտի լեռնանցքով: Կառուցումը աւարտվելու է 8½ տարում:

Դատական բարձրագոյն հաստատութիւնների մասնաժողովը որոշեց մերժել Պետական Դումայի 103 անդամների յայտարարութիւնը մահվան պատիժը վերացնելու մասին, այլ ցանկալի գտաւ մշակել մահվան պատիժը գործադրելու դէպքերը կրճատելու մասին մի նոր օրինագիծ:

Եպիսկոպոսական դեսպանատանը ի պատիւ պրինց Ֆուշիմի կայացաւ ճաշկերոյթ, որին ներկայ էին մինիստրները՝ Սոլիպինի հետ և պալատական պաշտօնեաները:

Ճաշից յետոյ տեղի ունեցաւ խընճոյք, որին մասնակցեցին համարեա ամբողջ դիպլոմատիական մարմինը, Պետական Դումայի և Խորհրդի նախագահները և այլն: (Հ. Գ.)

—

Մադրիդ, 1 ապրիլի

Թագաւորը հրովարտակով արձակեց պարլամենտը: Պատգամաւորների պալատի նոր ընտրութիւնները տեղի կունենան ապրիլի 25-ին, սենատի ընտրութիւնները՝ մայիսի 9-ին. նստաշրջանի բացումը նշանակված է յունիսի 2-ին: (Հ. Գ.)

—

Լօնդոն, 1 ապրիլի

Պատասխանելով համայնքների պալատում ուղղված հարցադրման, սր. սեկրետարի օգնական Վուդը բացատրեց, որ 1898 թ. Անգլիայի և Գերմանիայի մի խումբ դրամատէրերի միջև

համաձայնութիւն կնքվեց Շանդունեան թերակղզում երկաթուղիներ կառուցանելու վերաբերութեամբ, բայց ոչ բնաւ պաշտօնական համաձայնութիւն երկու կառավարութիւնների միջև։ Այդ համաձայնութիւնը իր ոյժի մէջ մնաց, սակայն գերմանացի խմբակը յայտնեց, որ այդ համաձայնութիւնը չէ տարածվում Խանկօու-Կանտոն և Խանկօու-Սէչուան երկաթուղագծերը կառուցանելու համար փոխառութիւն կնքելու վրա։ «Անկասակայարմար համարվեց,—ասաց վերջում Վուդը,—առարկել գերմանական խմբակի յայտարարութեան դէմ, որովհետև այդ առիթ կը տար սուր կերպարանք տալու զանազան խմբակների միջև կատարվող մրցութեանը»։

Լօրդ Բօզբերին ներկայացրեց հետևեալ բանաձևերը. ապագայ լօրդերի պարտը պէտք է բաղկացած լինի՝ 1) բոլոր ժառանգաւոր պէրերից ընտրված և կառավարութիւնից նշանակված լօրդերից, 2) իրանց պաշտօնավարական դրութեամբ պատաւում խորհրդակցող անձերից և 3) ոչ պէրերի միջից ընտրված անձերից։ Բոլոր լօրդերի մանդատների ժամանակը մէկ պէտք է լինի, բացառութեամբ այն լօրդերի, որոնք կը մնան պատաւում մշտապէս իրանց ծառայական դրութեամբ։ (Հ. Գ.)

—

Շանխայ, 1 ապրիլի

Խէնան նահանգի Զանկշա քաղաքում բռնկվել են անկարգութիւններ։ Բրիտանացի միսիոներները թաղվել են Եմէնում։ Շատով այնտեղ մեկնեցին բրիտանական երկու ռազմանաւեր։ (Հ. Գ.)

—

Տօկիօ, 1 ապրիլի

Կօբէի ճանապարհին առաջացաւ ուժանակի պայթում։ Քաղաքը և շրջակայքը փլավեցին զգալի կերպով։ Կան շատ վիրաւորներ։ (Հ. Գ.)

—

Վիէննա, 1 ապրիլի

Պատգամաւորների պատաւում զրաղմունքները վերսկսվեցին զատկական արձակուրդներից յետոյ։ Նախագահը առաջին հերթին առաջարկեց այն օրինագծի ընթերցումը, որով կառավարութիւնը լիազօրութիւն է ստանում կնքել 182 միլիոնի փոխառութիւն։ Սօցիալ-դեմօկրատ Զէյն առաջարկեց առաջին հերթին դնել պաշտօնեաների կանոնադրութեանը վերաբերող օրինագիծը, երկրորդ տեղը—փոխառութեան օրինագիծը։ Զէյի հռետօրները նոյնպէս բողոքում են նախագահի առաջարկութեան դէմ։ Զէյցի առաջարկութիւնը մերժվում է 259 ձայնով ընդդէմ 219-ի։ Ուժեղ աղմուկ։ Զէյն և արմատական պատգամաւորները բողոքում են։ Սկսվում է փոխառութեան օրինագծի ընթերցումը։ (Հ. Գ.)

—

Պետերբուրգ, 31 մարտի

Ծերակոյտի ժողովում սօց.-դեմօկրատական ֆրակցիայի ներկայացուցիչները պահանջ դրին շուտով քննել մահվան պատիժը վերացնելու օրինագիծը Դումայի մէջ։

Մարտի 29-ին Վրբօրգում երիտասարդ ֆինների հանգումարը միաձայն բանաձև է ընդունել այն մասին, որ սէյմից չընդունված օրէնքը հանդիսանում է ապօրինի ակտ։

ՖԷԼԻԷՏՕՆ

ՀԻՒՆ-ՎԷՎԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԵՒ ՄԵՐ ՏՆԱՍՈՒՆ ԼԵԶՈՒԱԳԻՏՆԵՐԸ

—

Իմ դուշակութիւնները արդարացան. հիւն-վէվական պատերազմը սկսվեց, կատաղեց, տարածվեց և այժմ սպառնում է համահայկական աղէտների կարգը անցնել։ Եթէ առաջ մենք ասում էինք՝ «այս-ինչ դէպքը տեղի ունեցաւ «ժամքի տարուց» հինգ տարի առաջ, կամ «ռուս-թուրքական» կուից 10 տարի յետոյ, կամ «ազատագրական շարժման» երրորդ տարում, այսուհետև պէտք է ասենք. «Այո, յիշում եմ, կարծեմ ասածդ դէպքը տեղի ունեցաւ հիւն-վէվական պատերազմից երկու տարի առաջ»։

Եւ նշանակալիցն այն է, որ այս կուիը, թէ իր ծագմամբ, թէ զարգացմամբ և, դուցէ և հետևանքներով՝ չափազանց յիշեցնում է ռուս-եապօնական պատերազմը։ Եթէ յիշում էք, եապօնացիների առաջին յարձակումը Պօրտ-Արտուրի վրա տեղի ունեցաւ յունվար ամսի վերջերին, տեղի ունեցաւ սուս ու փուս, ինչ-որ ականներից, որոնք օդը պայթեցրին ռուսական երեք թէ չորս պատերազմական նաւեր, որ հանգիստ մրափում էին Կօրէական ծոցի ջրերի վրա։ Ս. Մալխասեանցն էլ ճիշդ և ճիշդ հետևեց եապօնական տակտիկային. նոյնպէս յունվարի վերջերին՝ սուսիկ-փուսիկ բաց թողեց իր ականակիր վ-երին Ղ. Աղայեանի ւ-ների վրա, որոնք ամենայն բարեսրտութեամբ հանգչում էին մեր դասագրքերի, լրագիրների, նամակների և ոտանաւորների մէջ։

Անգլիական հիւբերի գալուստը այլևս չի կայանայ։

Պիրագօվի համագումարի կազմակերպիչ յանձնաժողովը հնարաւոր չը գտաւ թոյլ տալ ֆէլդշէրներին համագումարի մէջ։

«Новое Время»-ն «Առաջին նախազգուշութիւն» յօդուածով Ղզլարի պետական դանձատան վրա գործված յարձակման առիթով հանդէս է գալիս Փոխարքայի դէմ և մատնանշում է, որ յարձակումը հետևանք է այն բանի, որ տեղական իշխանութիւնները բարեացակամօրէն ցանկանում են չը դիմադրել չարիքին։ «Հարկաւոր է,—ասում է լրագիրը,—ուժեղ իշխանութիւն և ոչ թէ զառամեալ շփոթված մեծահոգութիւն»։ («Б.»)

—

Սմօլէնսկ, 31 մարտի

280 ատաղձաբոյժներ յանձնվեցին զատարանին կեղծ վկայականներով աշխատելու համար։ («Б.»)

—

Տուլա, 31 մարտի

Լէվ Տօլստոյի յարգողներից մինը կատկով 15,000 ռուբլի է զրել նրա տարամարդութեան տակ ժողովրդական հանրագիտական բառարան հրատարակելու համար։ Լէվ Նիկոլայեվիչը արդէն ձեռնարկել է գործի և հրաւիրել է աշխատակիցներին։ («Б.»)

ԹԻՒՐԲԻՆ ԵՒ ՊԱՐՍԿԱՍՏԱՆ

—

Կ. Պոլիս, 1 ապրիլի

Բէակցիօն ապատամբութեան երէկվայ տարեդարձն անցաւ միանգամայն հանդիստ։ Մի քանի մզկիթներում կատարվեցին հոգեհանդիսաներ սպանված զինուորների յիշատակին։ Սպանված պատգամաւոր Էմիր-Արսլանի հօրը «Մ. և Ա.» կոմիտէն ուղարկեց ցաւակցական հեռագիր։

Ալբանիայից հասնում են հանդստացուցիչ տեղեկութիւններ։ Կոսսօվայի վիլայէթում պարագուխների մեծ մասը հպատակութիւն է յայտնել. սակայն Իպէկից հաղորդում են, որ անհնազանդների կոմիտէը ժողով է գումարում յետագայ գործողութիւնները քննելու համար։ Զօրախմբերի թիւը Հիւսիսային Ալբանիայում հասցվելու է մինչև 35,000 զինուորի։ (Հ. Գ.)

—

Սալոնիկ, 1 ապրիլի

Հակառակ առերևոյթ հանգստութեան, դրութիւնը Ալբանիայում չէ փոխվում։

Ֆէրիզովիչում կենտրօնացել են 24 բատալիօններ. Սալօնիկից ուղարկվեցին երկու լեռնային բատարէաներ։

Ապստամբները գտնվում են իրանց հին դիրքերում։ Միջնորդութիւնը չօգնեց։ Ճշգրտացիները պնդում են իրանց նախկին պահանջների վրա։ Կառավարութիւնը վճռել է չը զիջել։ Վաղաժամ և տենդենցիօզ պէտք է համարել այն լուրերը, թէ ալբանացիները պատրաստակամ են հնազանդվել։ Ալբանացիները յարձակման են սպասում։

Պատժիչ զօրամասի գլուխ վերատին նշանակվեց ժամանակաւորապէս Զէվադ փաշան։ Վերջինս տեղեկացրեց երրորդ զօրաբանակի հրամանատարին, որ ուղարկված զօրքերը բաւական են. նա յարձակման չի դիմի և կը բաւականանայ առանձին միջոցներով։ (Հ. Գ.)

—

Կ. Պոլիս, 31 մարտի

Տեղեակ շրջաններում խօսում են, որ ներկայումս ճանապարհների հաղորդակցութեան և առևտրի մինիստրութիւնները շուտով անջատվելու են իրարից և գործելու են ամէն մինը անկախ։ Հալաճեանը կը մնայ առևտրի մինիստր, իսկ ճան. հաղ. մինիստրի պաշտօնը կը ստանայ պարլամենտի անդամներից Բահմի-բէյը։ («Б.»)

—

Թէհրան, 1 ապրիլի

Ի նկատի ունենալով որ մէջլիսում յաղթանակը տարան Նացիօնալիստները, Սիպէհդարը և Սարդար-Ասադը վերջնականապէս հրաժարական տուին։ Նոր կաբինէտի մէջ մտնելու են Մուստաֆա-ուլ-Մէմալիքը (մինիստր-նախագահ), Նավաբ-Հուսէյն-Կուլի-խանը (արտաքին գործերի մինիստր)։ Նոր կաբինէտի լօզունգը լինելու է Պարսկաստանի լիակատար անկախութիւնը և Անգլիայի ու Ռուսաստանի խնամակալութիւնից ազատագրվելը։ (Հ. Գ.)

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔՆԵՐՈՎ ԿՈՎԿԱՍԵԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ ՀԻՄՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԳԼԽԱՒՈՐ ԿՈՄԻՏԷՏԻ ՆԻՍՏԸ

—

Շաբաթ, մարտի 31-ին, Նորին Կայսերական Մեծութեան Կովկասի Փոխարքայի օգնական սենատոր Է. Ա. Վատացիի նախագահութեամբ, Փոխարքայի խորհրդի դահլիճում կայացաւ տեխնիկական բաժանմունքներով կովկասեան համալսարան հիմնելու հատար գլխաւոր կոմիտէի նիստը։ Ամենից առաջ լսեցին կոմիտէի անդամ և գործավար Վ. Սարատօնովի ընդհանուր հաշիւը կոմիտէի գործունէութեան մասին մինչև 1910 թ-ի ապրիլի 1-ը։ Կոմիտէը որոշեց ընդունել հաշիւը ի տեղեկութիւն։ Ապա նախագահը առաջարկեց քննութեան առնել բարձրագոյն դպրոցի տիպի հարցը և ֆակուլտէտներ բանալու կարգի մասին։ Այդ առիթով ուսումնական յանձնաժողովի նախագահ Ն. Բուդրէյֆ զեկուցեց վերոյիշեալ յանձնաժողովի եզրակացութիւնը այն մասին, թէ ո՞րքան կը նստի տարեկան թէ ֆիզիկօ մատեմատիկական և թէ իրաւաբանա-տնտեսական ֆակուլտէտները պահելու ծախսը։ Առաջին թանձնը արտայայտվում է 172,850 ռուբլով, երկրորդը—140,200 ռուբլով։ Բացի դրանից կարդացվեց հիւանդութեան պատճառով բացակայող կոմիտէի անդամ Լ. Մարկովի գրութիւնը, որի մէջ Մարկով իր խորհրդածութիւններն է յայտնում Թիֆլիսում հավաստարան բանալու մասին։ Իրված հարցը քննելուց յետոյ, գլխաւոր կոմիտէը որոշեց հաստատել իր նախկին եզրակացութիւնը, որ ցանկալի է հէնց առաջին հերթում բանալ փրկիչ-մատեմատիկական ֆակուլտէտ, իսկ միջոցների պակասութեան դէպքում — իրաւաբանա-տնտեսական ֆակուլտէտ։

Երբ սկսեցին քննութեան առնել կովկասեան հավաստարան բանալու համար եղած միջոցները, կոմիտէի նախագահը բացատրեց, որ 1907 թ-ի դեկտեմբերի 14-ին հաստատված Մինիստրների Խորհրդի օրագրութեամբ պէտք է լուծված համարել սկզբունքային հարցը կառավարութեան վերաբերմունքի մասին դէպի բարձրագոյն դպրոց բանալը Կովկասում։ Մինչդեռ ժամանակ, Մինիստրների Խորհրդի վերոյիշեալ օրագրութեամբ, նախանկատված է, որ միայն այն դէպքում կարելի կը լինի առաջարկել օրէնսդրական հիմնարկութիւններին կովկասեան հավաստարան հիմնելու օրինագիծը, եթէ նուիրատուութիւնները այնպիսի խոշոր գումարի հասնեն, որ նրանցով ապահովվի ոչ միայն հավաստարանի շինութիւնների կառուցումը, այլ և այդ հաստատութեան պահպանութիւնը։ Այդպիսի պայմաններում, մինչև որ ապագայ հաստատարանը պատշաճաւոր կերպով ապահովվի միջոցներով, կովկասեան հավաստարանի օրինագիծը ոչ մի ընթացք չէ կարող ստանալ։ Առաջին միջոցների հարցը քննելու ժամանակ գլխաւոր կոմիտէը հնարաւոր չը համարեց գոյութիւն ունեցող ապահովութիւնների թւում հաշուել այսպէս անուանված պայմանական նուիրատուութիւնները, մինչև որ այդ նուիրատուութիւնները չիրականանան։

Ի նկատի ունենալով այդ, գլխաւոր կոմիտէը որոշեց դիմել նախ՝ բոլոր նուիրատուներին, որոնք խոսք են տուել պայմանական կերպով մտցնել դրամներ հավաստարան կառուցանելու համար, հրաւիրելով նրանց կատարել իրանց խոստումները, և երկրորդ քաղաքային և հասարակական վարչութիւններին խնդրելով նրանց նիւթական նպաստ տալ հավաստարան կառուցանելու համար Թիֆլիսում, իսկ խոստացված նուիրատուութիւնները ստանալուց հետ, եթէ նրանք կը հասնեն բաւարար գումարի, ընթացք տալ Թիֆլիսում կովկասեան հավաստարան շինելու օրինագծին։

ՀԱՅ ԳԻՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՒ ՏՆԱՅՆԱԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿ. ՆԻՍՏՈՒՄ

—

Հինգշաբթի, ապրիլի 1-ին, կայացաւ Թիֆլիսի Հայ Գիւղատնտեսական և Տնայնագործական Ընկերութեան ընդհանուր ժողովը 60 հոգու ներկայութեամբ։

Նախագահ Ա. Բալանթար, զեկուցանելով օրակարգի մասին, առաջարկեց յարգել ընկերութեան անդամ հանգուցեալ Աղասի Մելիք-Այվազեանի յիշատակը ոտքի կանգնելով։

Բարտուղար Ա. Աթանասեան կարդաց անցեալ ընդհանուր ժողովի արձանագրութիւնը, որը վաւերացվեց։

Ս. Տէր-Պողոսեան կարդաց իր զեկուցումը «մի քանի դիտողութիւններ խոզաբուծութեան վերաբերութեամբ»։ Զեկուցանողը հաղորդեց գործնական կեանքում արած իր մի շարք դիտողութիւնները Թիֆլիսում եղած խոզերի ցեղերի և Դիլիջանի շրջանում գործադրվող խոզաբուծութեան փորձերի մասին։

Խօսակիցները պարզեցին խոզաբուծութեան կարիքները և ի միջի այլոց ցանկութիւն յայտնեցին, որ հրաւիրվի անասնաբոյժների յատուկ ուշադրութիւնը խոզի հիւանդութիւնների վրա, որոնց շնորհիւ մեր երկրի խոզապահութիւնը մեծ կորուստների է ենթարկվում։

Այնուհետև ժողովը ամբողջ երկու ժամ զբաղվեց Յ. Փիրալեանի հետաքրքրական զեկուցումով։

Յ. Փիրալեան հաղորդեց, որ նա Պետերբուրգ եղած ժամանակ կարդացել է յատուկ մի զեկուցում Պետերբուրգի եկեղեցական խորհրդի նիստում և պաշտպանել է Հայ Գիւղատնտեսական Ընկերութեան արած դիմումը այդ խորհրդին՝ տարեկան որոշ օժանդակութիւն ստանալու նպատակով։ Խորհուրդը, լսելով Յ. Փիրալեանի զեկուցումը, այլ և ուշադրութեան առնելով ընկերութեան վարչութեան մանրամասն հաղորդագրութիւնը, որոշել է ներկայ 1910 թ-ին տալ իր միջոցներից 2000 ռուբլի։

Իր զեկուցման երկրորդ մասում Յ. Փիրալեան հաղորդեց տեղեկութիւններ «Հաստատուն ու ինքնուրոյն, որքան մակակը, բայց որ նա այդ եղանակով է տանում իր կռիւը՝ դա անկասկած է։

— Դու երէկ ոs-ով էիր գրում,—մեղադրում են նրան,—իսկ այսօր վ-ով։

— Այո,—ասում է նա,—բայց դա երէկ էր, իսկ այսօր՝ այսօր է։

— Իսկ մեր նախահայրերը, Մեսրոպը, Խորենացին, Աւետարանն ու Սաղմոսը։

— Մեռեալներն են մեռեալներով պաշտպանվում, տիրացուները ու փոխասացները՝ Սաղմոսի լեզուագիտական հեղինակութիւնը ընդունում. իսկ ես, ես լեզուաբան եմ և հայկաբան և ապրում եմ 21-րդ դարում։

— Իսկ արևմտեան հայերը. չէ՞ որ նրանք էլ Հայկի զաւակներն են, Թորգոմի սերունդը, նրանք էլ գրականութիւն ունեն, լեզու և այլն. նրանց ինչ ասենք։

— Դա իմ գործը չէ. եթէ նրանք խելք ունեն, թող նրանք էլ մտածեն. եթէ չեն մտածում, դա նրանց բանն է. իսկ ես մտածում եմ ահա այսպէս։

— Իսկ «կաճառը», «ակադեմիան», հեղինակաւոր հաստատութիւնները». նրանք ինչ են ասում։

— Նրանք չը կան. իսկ եթէ կան՝ թող ասեն ինչ ուզում են. ես կը լսեմ և նրանց. բայց ինչ որ էլ ասեն, իմ կարծիքով, «լաւ»-ը պէտք է գրել «լավ», «ցաւ»-ը՝ «ցավ», «եւ»-ը՝ «եվ»։

— Անէծք քո գլխուն. ամօթ քեզ, դաւաճան, ազգուրաց,—սկսում են գոռալ նոյնիսկ Վիէննայից Մէնէվիշեանի նման գիտութեան քուրմերը, որ խնկի հոտից այն կողմը ուրիշ օդ ու մթնոլորտ չեն տեսել և չեն կարողանում տեսնել։

— Աւելի լաւ,—ասում է Մալխասեանցը,—կը նշանակի իմ մասը կպել է խկը վերքին. ահա այստեղն էլ կը ճղեմ իմ վ-ով։

Եւ ճղում է...

—

Վէվ-հիւնական պատերազմն ունեցաւ մեզ համար մի ուրիշ արդիւնք էլ. բանից դուրս եկաւ, որ ռուսահայերիս մէջ ահագին թիւով լեզուաբաններ են եղել, և մենք ոչնչից խաբարութիւն չենք ունեցել ու միամտաբար կարծել ենք, թէ մեր մէջ միակ լեզուաբան-հայկաբանը Ստ. Մալխասեանցն է։

Ապա կարդացէք մեր լրագիրները. ամեն օր, ամեն հաստատում նորանոր լեզուաբաններ է որ դուրս են գալիս, կարծիք յայտնում, քննում, որոշում և... վճռում են...

Ահա թէ ինչ կը նշանակի տաղանդաւոր և գիտնական ազգ։ Մէկին տեսնում ես բարակ-ժարակ, արշինն ու չօթքը ձեռքին մի դուքանում չիթ չափելիս կամ չօթք գցելիս, մտածում ես՝ լաւ պրիկաշչիկ է. բայց, մի քանի օր յետոյ, տեսնում ես դուրս եկաւ մի զուտ լեզուաբանական-գիտական հարցում և... վճռեց մի շատ բարդ հարց։

— Ո՞վ է գրողը,—հարցնում ես։

— Ապա գտէք։

Զորս-հինգ անուն ես տալիս—լեզուաբանների անուններ—դուրս է գալիս, որ դու սխալ ես, և այդ յօդուածը գրել է նոյն այն պրիկաշչիկը, որը չիթ էր չափում և չօթք գցում։

— Молодецъ,—ասում ես։

Միւս օրը կարդում ես մի գրականագէտի գրածը, որի գործն է եղել գրելը, յօրինելը՝ ընդունված ձեւով. կարդում ես դարձեալ զուտ լեզուագիտական մի ուսումնասիրութիւն։

— Ո՞րտեղից,—հարց ես տալիս,—դու և լեզուագէտ։

— Այո, երբեմն-երբեմն, երբ գրելուց յոգնում եմ, լեզուագիտութեամբ էլ եմ պարապում։

— Молодецъ,—ասում ես,—գրիր, լաւ ես գրում։

Եւ նա երես է առնում ու նորից գրում։

Մի ուրիշ օր կարդում ես մի ուսուցչի գրուածք՝ դարձեալ լեզուագիտութեան մասին։

— Բայց, պարոն, դու, որքան ինձ յայտնի է, մեր թեմական դպրոցի հինգերորդ դասարանից ես և այսօր էլ «համարեա»-ն գրում ես յամարիայ, «դարձեալ»-ը՝ դարցիալ և այլն. դու ինչ լեզուագէտ ես։

— Ինչու չէ. 4 տարի է՝ դաս եմ տալիս,—պատասխանում է նա,—թող ինձ էլ իմանան, ճանաչեն։

— Որ այդպէս է, ուրեմն դու էլ молодецъ,—ասում ես, գնում տուն և մտածում։

«Լաւ. ես ումից պակաս քաչալն եմ, ինչու ես էլ մի բան չը գրեմ ս-ի և վ-ի մասին»։

Եւ տեսնում էք, ահա ես էլ եմ գրում։

Եւ այսպէս, սիրելի հայեր, մեր ժամանակը իր էջերը լայն կերպով բաց է արել բոլոր ցանկացողների համար. եկէք բոլորս էլ գրենք. ինչ անենք, որ հարցը զուտ լեզուագիտական է, գիտական, մասնագիտական, բարդ և կնճռոտ։

Наплёвать այդ բոլորի վրա. չէ՞ որ մենք բոլորս էլ, ինչպէս ասում է Պուշկինը՝

— Научились. чему нибудь, да какъ нибудь.

Իսկի որ չըլի, հօ կը հայհոյենք։

Եկէք գրենք. մանաւանդ որ դրանով կիմանան ամենքը, որ

— Тамъ то, въ такомъ то мѣстѣ живетъ Иванъ Ивановичъ Добчинскій.

Իսկ դա մի բան արժէ... Սալ-Ման

ՄԻԱՑԵԱԼԻ ԵՐԵԿՈՅԹԸ

—

Թիֆլիսի հայկական երեք խոշոր ընկերութիւններ՝ Կ. Հ. Բ. Ընկերութիւնը, Հայուհեաց Բարեգ. Ընկ. և Դրամատիկական Ընկերութիւնը միացել էին մի ընդհանուր երեկոյթ տալու յօգուտ երեք ընկերութիւնների և այդ երեկոյթին անուանել էին «Soirée Monstre» (վիթխարի երեկոյթ)։

Դժբաղդաբար, այդ վիթխարի երեկոյթը դուրս եկաւ շատ ճղճիմ, շատ անվիթխարի և, կաւելացնենք, շատ անգեղարուեստական։ Այդ երեկոյթը մի աւելորդ անգամ ապացուցեց այն ասացուածը, որ կայ հայերի մասին. «մի հայ շատ խելօք է, բայց երեք հայեր միացած՝ անմիտ»։ Երբ ամեն մի ընկերութիւն զատ զատ տալիս էր իր երեկոյթը, լաւ էր և արդիւնքը, թէ նիւթական և թէ բարոյական կամ. գեղարուեստական, բաւարար. բայց ահա երեք ընկերութիւններ միացան և երեկոյթի արդիւնքը, թէ ըստ նիւթականին և թէ ըստ գեղարուեստականին, դուրս եկաւ անբաւարար և ուղղակի տաղտկալի, հակագեղարուեստական։ Բայց այդ երեկոյթն ունէր և մի այլ յատկութիւն. նա ինտերնացիոնալ էր։ Եւ ինտերնացիոնալ դարձնելու համար երեկոյթի կարգադրիչները ոչ մի ջանք չէին խնայել, որ երեկոյթից (դահլիճում, կարարէ անունով մասում) ամեն բան, ինչ որ հայկական է, վտարված լինի։ Դահլիճում նստած էր տեղացիների առաջ բացառապէս հայ հասարակութիւն և այդ հայ հասարակութիւնը լսեց ամեն տեսակ բան՝ և տափակ կուպլէտներ, և սկաբրեզ շանսոնէտային երգեր և այլ երգեր, ոտանաւորներ, բայց այդ ամենը նա լսեց կամ թուքթուքեն և կամ վզոցուքեն։ Հայերէն ոչ մի խօսք, ոչ մի երգ, ոչ մի ոտանաւոր հայ հասարակութիւնը չը լսեց. հայերէնը վտարված էր. նոյնիսկ պրօգրամը հայերէն չէր, թէև ընդհանրապէս սովորութիւն է տալ երկու լեզուով։ Կարարէ կոչվածը իսկապէս մի բալագանային երեկոյթ էր, որ լաւ գաղափար էր տալիս միացեալ ջանքերի մասին։

Ինչ վերաբերում է թատրօնական ներկայացման, որ երեկոյթի երեսը միակ պարզողն էր, պէտք է ասենք, որ սիրողները. հաճելի ապաւորութիւն թողեցին։ Մանաւանդ լաւ կատարեցին իրանց դերերը օր. Նաղաբեկը, օր. Մելիք-Ադամեանը և տիկ. Մամուլեանը։

Ցանկալի էր, որ այդ տեսակ երեկոյթներ այլևս չը կրկնվեն։ Հ. Ա.

ՍԿԱՆԴԱԼԱՅԻՆ ԳՐՈՒՄՆԵՐ

Ֆ. Ռեյմոնտ

(Հետամուտ)

Ֆ. Ռեյմոնտ մեր վերջին գրքերի հեղինակն է։ Նրա «Գյուղացիներ» վեպերը, որոնք թարգմանվեցին գերմաներեն, ֆրանսերեն, անգլերեն, իտալերեն, հոլանդերեն, ռուսերեն, լեհերեն, հունարեն, հունգարերեն, ինչպես նաև սլավոնական մի քանի լեզուներով, ամենուրեք մեծ հաջողություն գտան։ Ֆ. Ռեյմոնտի գրքերը հրատարակվեցին Գերմանիայում, Ֆրանսիայում, Անգլիայում, Ամերիկայում, Իտալիայում, Հոլանդիայում, Ռուսաստանում, Լեհաստանում, Հունգարիայում, Սերբիայում, Բուլգարիայում, Հունաստանում, Ռումինիայում, Չեխիայում, Սլովենիայում, Սլովակիայում, Ուկրաինայում, Կրոատիայում, Գալիսիայում, Ռութենիայում, Բելգիայում, Հարավային Ամերիկայում։ Ֆ. Ռեյմոնտի գրքերը թարգմանվեցին նաև հայերեն, ինչպես նաև ֆրանսերեն, գերմաներեն, անգլերեն, ռուսերեն, լեհերեն, հունգարերեն, սերբերեն, բուլգարերեն, հունարեն, ռումիներեն, չեխերեն, սլովենիերեն, սլովակերեն, ուկրաիներեն, կրոատերեն, գալիսերեն, ռութեներեն, բելգերեն,

կայ դուսարել ագրոնոմների և ուրիշ տեղական անձերի խորհրդակցութիւն Կովկասում առաջիկայ տարի փորձնական և ցուցադրական գործի կազմակերպութեան հարցի համար։ Խորհրդակցութիւնը տեղի կունենայ գիւղատնտես Վասիլիեվի նախագահութեամբ։

✦ Լոյս տեսաւ «Արօր» ամսագրի մարտի համարը, որ պարունակում է բացի նախորդ համարների շարունակութիւններից մի նոր պատմուածք՝ Գ. Տէր-Պողոսեանի, Մինաս Չերազի ֆրանսերէն մի պատմուածքի թարգմանութիւնը, Մ. Նաթանեանի կենսագրական նօտերը Արփիարի մասին, Խ. Սամուէլեանի՝ «Եկեղեցական-պատմական յարաբերութիւնները հին Հայաստանում» յօդուածը և այլն։ Ուշադրութեան արժանի է ռուս գիտնական Մէչնիկովի «Մարդու մարմնի անկատարելութիւնը» յօդուածի թարգմանութիւնը։

✦ Բապտիստների Թիֆլիսի ընկերութեան լիազօրները մի յայտարարութիւն են ներկայացրել քաղաքային վարչութեանը, որի մէջ խնդրում են ձրիաբար 500 քառաժէջ քաղաքային հողաբաժին յատկացնել էլեքտրաքարշի կայարանի մօտերը կամ մաքատան դիմաց աղօթատուն և դպրոցի շէնք կառուցանելու համար։

✦ Մարտի 27-ին և 31-ին «Մամուլի սինդիկատ» կոչված գործի առիթով կազմված պատի դատարանը հարցաքննեց այն բոլոր «ժուրնալիստներին», որոնք այսպէս թէ այնպէս մեղակից են յիշեալ խայտառակ գործին։ Այդ հարցաքննված անձանց ցուցմունքները տարբերվում են իրարից շատ բաներով։ Պատի դատարանի հետեւեալ նիստը կը կայանայ ապր. 8-ին։

✦ Պայմանագիր կապվեց այն մասին, որ պօստ-հեռագրական գրասենեակը մնալու է դարձեալ այժմեան շինութեան մէջ մինչև 1913 թիւը։ Մինչ այդ՝ պօստային գրասենեակը կը բաժանվի հեռագրական բաժանմունքից։

✦ Սուրբանում 3 ամսվայ ընթացքում Բէնկէնդորֆի նաւթահորից ֆոնտանը արտավիժել է 4,048,890 պուդ նաւթ։

✦ Բագուի առևտրական դպրոցում հոգաբարձութիւնը մի թոշակաւոր է հաստատել Ս. Թադիանոսեանի անունով ի յաւերժացումն նրա 10-ամեայ նախագահութեան Բագուի բօրսային ընկերութեան մէջ։

✦ «Каспій»-ին հեռագրում են Պետերբուրգից. «Քննելով վրաց հոգևորականութեան ուղերձը վրաց եկեղեցու աւտոկէֆալութեան մասին, սինոդը որոշեց հարցի լուծումը յետաձգել մինչև համառուսական եկեղեցական հաւաժողով գումարելը։ Վրաստանի էկզարխ Ինոսկէնտի արքեպիսկոպոսին հարցաքննդում ուղարկվեց վրաց եկեղեցու արդի կացութեան մասին»։

✦ «Մշակի» № 72-ի մէջ լոյս տեսած «Մի վարդապետ՝ բանադրողի դերում» յօդուածի մէջ միտքն աղաւաղող մի սխալ է սպրդել։ Թերթի առաջին երեսի չորրորդ սիւնակի վերջերում, ներքևից հաշուած երկրորդ տողի սկզբի բառը փոխանակ լաւ լինելու պիտի տպված լինէր լուռ։

✦ Դէրի գիւղից (Շամշ. շրջ.) մեզ գրում են. «Տեղիս մի խումբ երիտասարդների շրջանում միտք է յղացել ակցիոներական ընկ. կազմել և գիւղատնտեսական գործիքների խանութ բանալ մեր գիւղում։ Այդ խանութում կը ծախվեն միմիայն այն մեքենաները և փայտեայ գործիքներն ու մեքենաները, որոնք անհրաժեշտ են երկրագործ ժողովրդին։ Այս ուրախալի լուրը տարածվելով շատերը հէնց այժմեանից խոստանում են գնել նոր ձևի գութաններ, կալքամելու մեքենաներ, շղթաներ և այլ զանազան գործիքներ, իսկ իրանց անդրջրհեղեղան «չութերին» վերջ տալ»։

ԹԱՏՐՕՆԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

✦ Ապրիլի 6-ին Գրական-Գեղագիտական Ծալօնում տեղի կունենայ գրական-երաժշտական հանդէս ի յիշատակ երաժշտագէտ Մակար Եկմալեանի։ Կը պատմվեն յիշողութիւններ հանգուցեալի մասին, կերգվեն նրա երկերի լաւագոյն կտորներից և այլն։ Ինչպէս երևում է ծրագրից, երեկոն լինելու է վերին աստիճանի հետաքրքրական. տոմսակների թիւը սահմանափակված է։

✦ Առաջիկայ երեքշաբթի, ապրիլի 6-ին, տեղի կունենայ «Տախտ» նշանաւոր դրամայի ներկայացումը Գայիանեան դպրոցի օգտին։ «Տախտը» առաջին անգամն է ներկայացվելու հայերէն լեզուով։ Ներկայացումը տեղի կունենայ Արքունական թատրոնում։

✦ Մուլէն-էլեքտրիկ թատրոնում ի թիւս այլ պատկերների ցուցադրվում է «Տարնօվսկայայի գործը», որ ներկայումս քննվում է Վենտիկում և որի վրա յառած է համաթեա ամբողջ աշխարհի ուշադրութիւնը։

✦ Վաղը արտիստական ընկերութեան մէջ տեղի կունենայ Կօցեանի և Բուտկեվիչի վերջին համերգը մասնակցութեամբ Նիկոլայեվի։

✦ Վաղը ժողովրդական թատրոնում երաժշտասէրների ընկերութիւնը տալիս է համերգ։ Ապրիլի 9-ին միևնոյն տեղում ժողովրդական գնելով կը ներկայվի «Ֆաուստ» օպերան։

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Գանձակ, 29 մարտի

Ի գիտութիւն ընթերցողներիս յայտնում եմ, որ «Խաթաբալայի»-վերջին համարներում Գանձակից լոյս տեսած նամակների հեղինակը ես չեմ։ Ես երբէք չեմ թղթակցել «Խաթաբալային», դուցէ այսուհետև ոչ մի դէպք էլ տեղի չունենայ։

Գալով այն բարի մարդկանց, որոնք դիմակաւորվելով հասարակութեան առաջ շահագործում են ուրիշների անունը, կը խնդրէինք զգոյշ մնալ պատասխանատուութիւնից։

Գրիգոր քահ. Գորգեանց (Սարգս)

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

Թաւրիզ, 26 մարտի

Պատմական Փայտակարանը՝ Ղարադաղը խաղաղվեց երևութապէս. սակայն հայերը մնում են դեռ ևս անապահովութեան մէջ՝ մատնված խաների անողոք կեղեքումներին։ Վերջին օրերումս Բէյվանի շրջանի 9 հայ գիւղերի հայերից Թաւրիզ են թափվել, առաջնորդարանի և քարգուզարիայի դռներն են մաշում, բողոքում Բէրիմ խանի ձեռքից և դարման հայցում։

Ղարադաղի հայ ազգաբնակութեան և հրոսակ խաների միջև ստեղծված վատթար յարաբերութիւնը և շատ անգամ արիւնոտ ընդհարումները երկար տարիների պատմութիւն ունեն։ Տիարահուչակ Բահիմ խանի եկւոր հրոսակաբարոյ Էլաթը Ղարադաղ խուժելուց և Բէյվանի լեռնամիջի գիւղերը բռնի տիրելուց յետոյ, հայ ժողովրդի յարաբերութիւնները աւելի ու աւելի սուր ընաւորութիւն են ստացել։ Խաների հետ ահաւոր կռիւներ է ունեցել այժմ կենդանի Մելիք-Զհանեան Զհանկիր բէկի հայրը Մելիք-Սարգիսը, որը, Բէյվանի լեռնոտ շրջանի 9 գիւղերի հայ ժողովրդի վիճակը փոքր ինչ բարելաւելու և հրոսակների ճնշումներից ըստ չափու ազատ պահելու նպատակով, աջողել է Թէհրանից ստանալ յիշեալ 9 գիւղերի սարփարաստութեան իրաւունքը, որի զօրութեամբ հայերի գոբաւունքը, դատերը, տուրքերը և այլն՝ հայ սարփարատի միջոցով պէտք է կատարվէին։ Մելիք-Սարգսի մահից յետոյ միևնոյն իրաւունքը ձեռք է բերել Զհանկիր բէկը՝ Մուզաֆֆէր-Էդդին շահից, անձամբ գնալով Թէհրան։ Մինչ այդ ստացված իրաւունքները շատ էժան չեն նստել ինչպէս Մելիք-Սարգսի, նմանապէս և՛ Զհանկիր բէկի վրա. տեղի են ունեցել անվերջ կռիւներ ու սպանութիւններ. Զհանկիր բէկը երկու անգամ գնդակի վէրք է ստացել, մինչև որ վերջապէս մի կերպ կառավարել է այդ շրջանը որոշ չափով պաշտպանելով հայերին խաների հարստահարութիւններից։ Ատրպատականի թեմի նախկին թեմականներից հանգուցեալ Ստեփանոս եպիսկոպոս Մխիթարեանն իր ժամանակին շատ ջանք ու քրտինք է սպառել Ղարադաղի արիւնարբու դայլերին ճնշելու և, պէտք է ասած, ունեցել է աջողութիւն իր սեփական ճարպիկութեամբ և մասամբ ժամանակի հանգամանքների բերմամբ։

Պարսկաստանում անցած երկու տարիների քաղաքական խառնաշփոթութիւնները նոր ասպարէզ հարթեցին Բահիմ խանի և իբրայիլների համար, որոնք Ղարադաղի անսահման տէրերը դառան, և տարաբաղդաբար Բէյվանի մահալի 9 գիւղերը նորից մնացին Բահիմ խանի գերիշխանութեան ներքոյ։ Բահիմի փախուստից յետոյ իշխանութեան աթոռն անցաւ Բէրիմ խանի և համախոհների ձեռքը։ Ինչ կասկած, որ խեղճ գիւղացիների դրութիւնը առաւել վատթարացաւ։ Ահա այդ պատուհասից ազատվելու համար գիւղացիք դիմել են Թաւրիզ։ Առաջնորդ Կարապետ սրբազանը մի պաշտօնագրով դիմեց նորակ քարգուզարին և, բացատրելով Զհանկիր բէկ Մելիք-Զհանեանի ունեցած սարփարաստութեան իրաւունքը, պահանջեց, որպէսզի վերջինս ճանաչվի սարփարատ, և ըստ առաջնոյն հաշիվի դատերն ու բոլոր գործերը յանձնվեն նրան։ Թեմական խորհուրդը ձեռնարկել է և՛ մի այլ բանի, այն է՝ ունենալ տեղացիներից կազմված հոգաբարձութիւն հայ սարփարատին աջակցելու համար. և երկրորդ՝ պահել մի գիտակից և ուժեղ անձնաւորութիւն ազգային կալուածների և այլ անտեսական գործառնութիւնների պաշտպանութեան համար։ Թէ ինչ կը լինեն քարգուզարի պատասխանը թեմականին, և ինչ՝ թեմական խորհրդի ձեռնարկութիւնը, որի կարիքը հրամայական է, կը զրեմ «Մշակին»։

Թէհրանի մէջլիսի հայ անդամի ընտրութեամբ զբաղվող պատուիրակների ժողովը, երկու շաբաթ առաջ, տեղի ունեցաւ, և մեծամասնութեան քուէով ընտրվեց Յովսէփ Միրզայեանցը։ Հեռագիրներն առ օր անկ էին՝ տրվեցին իր ժամանակին։

Հայկազուն

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ԲԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ԲԱԼԱՆԹԱՐ
Յ. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼՅԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
Զինուորական մասնագետ-բժիշկների
ԵՐԹԱԿԻ հիւանդների համար
Վանքի մեծ փողոց, № 3, Նիէբանդրեան այգու մօտ։
ԽՈՐՀՐԴԻ ՎՃԱՐՆ է 50 ԿՈՊ.
Տէլէֆոն № 481.
Հիւանդների ընդունելութիւնը առաւօտ. ժամը 9½-ից մինչև 5-ը ցերեկվայ։
ԱԽՎԼԵԴԻԱՆԻ—ներքին և երեխաների հիւանդ., ամեն օր՝ 11—12 և 4-ից ցեր.։
ԲՕԺՕՎՍԿԻՑ—ներքին, բժշկութիւն ներշնչումով, ամեն օր՝ 4—5 ժամը ցեր.։
ՎՆՈՒԿՈՎ—խիրուրգիական հիւանդութիւններ, ամեն օր՝ 2—3 ժ. ցեր.։
ԳՐԷՅՑ—աչքի հիւանդութիւն., ամեն օր 2—3 ժ.։
ՄՕՆՍԷ—երեխ. և ներքին հիւ. ամեն օր՝ 1—2 ժ.։
ԿԱԼԱՄԿԱՐՈՎ—մանկաբարձ. և կանանց հ., ամեն օր՝ 4—5 ժ., բացի կիրակի օրերից։
ՆՕՎԻՑԿԻՑ—մանկաբարձ. և կանանց հիւանդ., ամեն օր՝ 1—2 ժ. ցեր.։
ՐԻԴԵԼ—ներքին և երեխ. հիւ., ամեն օր՝ 3—4 ժ., կիրակի՝ 10—12 և 4-ից։
ՊԱՎԼՈՑԿԻՑ—խիրուրգիական հիւանդ., ամեն օր՝ 4—5 ժ. ցեր.։
ՏԷՏՐԱՉԷ—սիֆիլիս, վեներ., կաշուի հիւ., ամեն օր՝ 1—3 ժ. ցեր.։
ԿԻՆ ԲԺ. ԻՕՍՍԷԼԻԱՆԻ—կանանց հիւ., երկուշ., չորեքշ., ուրբ., կիրակի՝ 11—12 ժ.։
ԱՍՊԻՍՕՎ—կոկորդի, քթի, ականջի հիւ., ամեն օր՝ 1—2 ժ. ցեր.։
ԲԱԼԴԻՆԱ-ՆՕՎԻՑԿԱՅԱ—քթի, կոկորդի և ականջի հիւ., ամեն օր՝ 11½—12½ ժ. ցեր.։
ՇԱՄԱՇ—խիրուրգ. հիւ., ամեն օր՝ 12—1 ժ.։
ՄԽԻԹԱՐԵԱՆ Ա.—սիֆիլիս, միզասեռ., վեներ. և կաշուի, ամ. օր՝ 9½—10½ ժ. առ.։
ՊՕՆԴՕԵՎ—ջղային հիւ. և էլեքտրօտէրապիա. ամեն օր, ժամը 4—5-ը։
Համախորհուրդ, օպերացիաներ, մասաժ, ծաղկի պատուաստումներ, անալիզ, հիպնոզ, ատնդուների և ծառաների քննութիւն—առանձին վճարով։ Սիֆիլիսի վերաբերմամբ արեան հետազօտութիւն ըստ Wassermann-ի։
(Կ.) 356. 100—28

ԲԺԻՇԿ
Ա. ՄԽԻԹԱՐԵԱՆՑ
Սիֆիլիս, միզասեռական, վենեռական և կաշուի հիւանդութիւններ։
Ընդունելութիւնը
ամեն օր { առաւօտեան ժ. 12½—2. երեկոյեան ժ. 5—7.
Կիրակի օրերը միայն առ. ժ. 11—12½.
Հասցէն՝ Սօլօլակ, Բէհբութեան փ., № 33.
(օ. մ.) 1044. 100—98

ԲԺԻՇԿ
Գ. Ն. ՄԱՂԱՔԵԱՆ
ՆԵՐՔԻՆ ԵՒ ԵՐԵԽԱՅՈՑ
ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ
առանձնապէս ՍՏԱՄՈՔՍԻ և ԱՂԻՔՆԵՐԻ հիւանդութիւններ։
Ընդունելութիւն ամեն օր { 5—7 ժ. երեկ.
Միքայէլեան փող., № 36. Տէլէֆոն № 388
(օ. մ.) 1216. 100—97

ԲԺԻՇԿ
Խ. Բ. ՄԵԼԻՔ-ԷՅՆԱԹԵԱՆ
Սանդագէտ սիֆիլիս, վենեռական, միզասեռական և կաշուի հիւանդութիւններ։ Հիւանդների ընդունելութիւնը՝ առաւօտ. ժամը 9-ից մինչև 10-ը, երեկոյեան ժամը 5-ից մինչև 7-ը։
Կէնիեվսկայա փ., № 6, «Վէտցէլ» հիւրանոցի մօտ։ (Ե. Հ. Շ.) 955. 100—77

ԲԺՇԿԱՊԵՏ
Ա. ՔԱԹԱՆԵԱՆ
Ներքին և ջղային հիւանդութիւններ։
Ընդունելութիւնը
ամեն օր { առաւօտեան 9—12 ժ. երեկոյեան 5—7 ժ.
Միքայէլեան փողոց, № 27.
(ա. օ.) 1087. 100—100

ՄԵԴԻՑԻՆԱՅԻ
ՖԷԼԴՇԷՐ-ՄԱՍՍԱԺԻՍՏ
Ա. Գ. ԵՍԱՅԵԱՆ
Բժիշկների որոշմամբ կատարում է կաշուի տակ սրսկումներ, լուացումներ (спринцов.), վէրքի փաթաթումներ, դեղերի քսումներ (втираніе) և այլն։ Էլեքտրականութիւն բէվմատիզմի, պարալիչի, սեռական անկարողութեան և թուլութեան դէմ։ Մասսաժ էլեքտրական գործիքով և ձեռքով։ մասնաւոր և ընդհանուր մասաժ։ Բժշկական մարմնամարզութիւն, ծաղկահատութիւն։ Օտարերկրեայ հիւանդներին ցոյց է տալիս մասնագէտ հնուտ բժիշկներ։ Խորհուրդը 50 կոպ.։ Ընդունելութիւնը՝ կանաց—3—3½ ժ., տղամարդանց—3½—4½ ժ.։ Семеновская ул., № 9.
(Կ. Հ.) 77. 50—20

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԱԳԵՆՏ
Տեղական եւ օտար քաղաքների լրագրների ու ամսագիրների համար։
Մ. Ա. ԳԱԼՕՆԻԱ
Ընդունվում են ձեռնտու պայմաններով ամեն տեսակ յայտարարութիւններ՝ ինչպէս տեղական, նոյնպէս եւ օտար քաղաքների լրագրների ու ամսագրերների համար։ Իմ ծառայութիւնից օգտվել ցանկացողներին խնդրում եմ դիմել այս հասցէով. Тифлисъ, Великокняжеская, № 40. Տէլէֆոն № 216.
(Կ. Հ.) 339. 15—4

Հրաւէր

Աւետաց (Զգրաշէն) ս. Աստուածածնի եկեղեցու երէցփոխի ժամանակը լրացած լինելու պատճառով, վաղը՝ կիրակի, ապրիլի 4-ին, ցերեկվայ ժամը 12-ին ծխականների ժողով է լինելու նոր երէցփոխ ընտրելու և ուրիշ հարցերի մասին խորհրդածելու համար. ուստի սրանով պատիւ ունեմ հրաւիրելու մեծապատիւ պ. պ. ծխականներին, որ յիշեալ օրը և ժամին շտապեն եկեղեցի մասնակցելու ընտրութեանը։

Գործակալ՝ Գրիգոր ա.-ք. Մանդակունի
373. 1—1

Հրատարակութիւն Գ. Գասպարեանի, № 44.
Լոյս տեսաւ
Պ. ԱՐԱՔՍԵԱՆԻ
ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԹԱՏՐՕՆ
ԳՈՂՈՎԱԾՈՒ Ա.
(Թարգմանութիւններ և ինքնուրոյն աշխատութիւններ)
Բովանդակութիւն.
1) «Թանգագին համբոյր», վոդ. 1 գործ.
2) «Ցանկալին և անսպասելին», Բիշկովից թարգմանած։
3) «Լուսանկարչական պատուաստ», կատակ 1 արարուածով։
4) «Բաբելոնեան խառնակութիւն», կոմէդիա 1 արար., փոխադրութիւն։
5) «Աւետիս աղա», կամ «Բազունթալու պօստային կայարանը», վոդ. էսքիզ 1 գործ.
6) «Շեփթված ծառայ», վոդեվիլ 1 արար., փոխադրութիւն։
Գինն է պօսի ծախքով 1 ռուբ.
Դիմել՝ Книгоиздательство и книжный магазинъ „Гуттенбергъ" Г. И. Галустяна, въ Тифлисѣ.
(Հ. Շ.) 365. 2—2

Մեղրիի Սպառողական Ընկեր. Վարչութիւնը
սրանով յայտարարում է բոլոր փայատէրերին, որ ՆԱԽԿԻՆ ԱՆԴՈՐԱԳՐԵՐԸ ՓՈԽԱՐԻՆՎՈՒՄ ԵՆ ՆՈՐԵՐԻ—կապոյտ գոյնով, որի համար ժամանակ է տրվում մինչև ներկայ թուականի յունիսի 30-ը, որից յետոյ հին անդորագրերը կորցնում են իրանց ոյժը։
(ու. շ.) 367. 2—2

Զատրաղայի շրջանի ԲԵԼԵԲԱՆ գիւղից փախել է ԽՈՍՐՈՎ ՄԻՆԱՍԵԱՆ, 15 տարեկան։ Վերջին անգամ նա եղել է Լագօդէխում, որտեղից գնացել է Թիֆլիս։ Տեղը գիտցողներին խնդրվում է յայտնել մօրը՝ հետեւեալ հասցէով. Черезъ ВЕРХНІЕ-АКУЛИСЫ въ Танакертъ, Айканушъ Минасянцъ.
(ու. շ.) 369. 2—2

ԹԻՖԼԻՍԻ ԿԵՆՏՐՕՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ
Վաճառվում են հետեւեալ նոր գրքերը.
Ադ. Մխիթարեան.—«Զուարճալի զրօսարան» կամ (Էֆեմէրդի) 1 ր. 45 կ.։
Թումանեանի մանկական գրքերը.
» «Թէկաբերդի առումը» 15 կ.։
» «Շունն ու կատուն» 25 կ.։
» «Գառնիկ ախպէրը» 50 կ.։
» «Մի կաթիլ մեղրը» 50 կ.։
» «Խօսող ձուկը» 15 կ.։
Տեր-Յովհաննիսեան.—«Ծաղրածու» (ժամանակակից կեանքից վերցրած ծիծաղաշարժ անեկդոտների ընդարձակ ժողովածու) 50 կ.։
Աբրդ-Զիւանցիի հեքիաթները հանդերձ երգերով.
» «Աշըղ Ղարիբ» 40 կ.։
» «Քեռարամ և Ասլի» 60 կ.։
» «Մելիք-Շահի հէք.» 30 կ.։
» «Շահ Իսմայիլի հէք.» 30 կ.։
» «Որշարայ և Լուսաբեր» 30 կ.։
» «Զիւանի քնարը» Ա. մ. 50 կ.
» Բ. մ. 50 կ.։
Աղայեան.—«Քեօրօղլի» 15 կ.։
» «Հայ գրողներ» 2 ր.։
Կիրակոս Գանձակեցի.—«Պատմութիւն հայոց» 30 կ.։
Մանուելեան.—«Ռուսահայ գրականութեան պատմութիւն» 40 կ.։
Այվազեանց.—«Աշտարակ Երկաթ», պատմական վէպ. 1 ր.։
Շիրակի հրատ.—«Հայ Աշուղներ» 30 կ.։
Բաֆֆի.—«Զահրումար» 2 ր., «Ճանկատ հայք» 50 կ.։
Լեօ.—«Մէլիքի աղջիկը» 2 ր.։
» «Դաւիթ և Մհեր» ժողովրդ. վէպ 15 կ.։
» «Հայկական տպագրութ.» 1 ր. 20 կ.։
» «Ախտահանութիւն» 40 կ.։
» «Յովսէփ կաթող. Արդութեան» 60 կ.։
Օտար քաղաքներից պէտք է դիմել՝ ві Тифлисъ, Центральной книжной торговлѣ.
Ռուսաստանի սահմաններում օտար քաղաքներից պատուիրողներ պէտք է իրանց հասցէն պարզ և ճիշդ ուղարկեն գրեն և գրքերի արժէքը լիովին փոխադրեն։ 10 ռուբլու և աւելի պահանջողները կարող են ուղարկել մի երրորդական։
377. 1—1

ՀԲԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ Ց. ԳՐԻՍՏՈՓՈՐԵԱՆԻ
ԶՈՒԱՐՃԱԼԻ ԶԲՕՍԱՐԱՆ ԿԱՄ ՎԻՃԱԿԱԽԱՂԵՐ
ազգ. առածներով, հանելուկներով, ընդարձակ եռագահանով եւ այլն։ Պառուցակում է եւ Եփիմերտ
ԲԱՂԿՈՅԱԾ ԵՐԿՈՒ ՄԱՍԻՑ, 360 էջ։
Սոյն հրատարակութիւնն անմեղ և ուրախ ժամանցի համար է և արժէ որ իւրաքանչիւր հայ տուն ունենայ իր սեղանի վրա։
Պահեստը Թիֆլիսում հրատարակչի մօտ կամ կենտրոնական գրավաճառանոցում։
ԳԻՆԸ—թղթակազմ՝ 1 ր. 30 կ., կազմված՝ 1 ր. 40 կ.։
(Կ.) 350. 5—2

Թիֆլիսի Քաղաքային Վարչութիւնը
խնդրում է այն անձերին, որոնք վճարել են քաղաքային տուրքերը X, XI և XII թաղամասերում՝ №№ 28903, 28905 և 28916 անդորրագրերով, որոնք տրված են հարկահաւաք Թեոդորովի ձեռքով, ներկայացնել յիշեալ անդորրագրերը Քաղաքային Վարչութեան IV բաժանմունքը՝ զբաղմունքի օրերը՝ առաւօտեան ժամը 10-ից մինչև ցեր. ժամը 2-ը, այդ առիթով ծագած թիւրիմացութիւնները պարզելու համար։
(ա. օ.) 374. 3—1

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ
„ԱՐՕՐ"
Ամսագրի № 3-ը (մարտ)
ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ.
1) Հովոցի Եղօն, պատմուածք. Գ. Տէր-Պողոսեան
2) Արմենակի, պատմուածք Մինաս Չերազի. թարգմ. Վ. Հայկազն
3) Խնդամոլիկ աղջիկը, վէպ. Ա. Արփիարեան
4) Փաշան. Ռ. Խան-Ազատ
5) Եկեղեցական-պատմական յարաբերութիւնները Հին-Հայաստանում. Խ. Սամուէլեան
6) Օսմանեան հայերի ազգային սահմանադրութիւնը. Սարուխան
7) Երազուն գիշեր, ոտանաւոր. Ա. Տէր-Անանեան
8) Արփիար Արփիարեան. Մ. Նաթանեան
9) Երգչուհին, ոտանաւոր. Արսէն Երկաթ
10) Հայաստանն առաջ և հիմա, Լէման Հաուպտի. թարգմ. Ի. Յարութիւնեան
11) Գիւղական մրմունջներից, ոտանաւոր. Շատէ Արաբ
12) Մարդու մարմնի անկատարելութիւնը, Ի. Մէչնիկովի. թարգմ. Ա. Նազարեթեան
13) Հայկական կեանք. Ա. Արզահատեան
14) Ռուսական կեանք. Կալիաս
15) Գրախօսութիւն.
16) Ցաւելուած—Իննսուն երեքը, մեծ վէպ Վ. Հիւգոյի. թարգմ. Ա. Սաֆարեան
17) Յայտարարութիւններ

«Արօրի» բաժանորդագրութիւնը շարունակվում է։ Տարեկան բաժանորդագինն է 4 ռուբլի։ Նոր բաժանորդները կը ստանան մինչև այժմ լոյս տեսած բոլոր համարները։ Դիմել այս հասցէով՝ Тифлисъ, ред. газ. „Мшакъ" для „Арора". 361. 2—2

500 рублі պարգեւ
կը ստանայ իւրաքանչիւրը, ով կարացուցել, որ ստորև յիշված 25 ՀԱՏ ՀԵՏԱՔՔՐՔՐԱԿԱՆ, ԱՐԾԷՔ., ՕԳՏԱԿԻՑ և ՌՈՒՆԿՈՒՆԵՐը չարժեն նրանց համար նշանակված առապարական էժան գինը, այսինքն՝ 20 ՌՈՒԲ. ՓՈԽ. **ՄԻԱՅՆ 5 Ր. 90 Կ.**
ՊԱՀԱՆՋԵՑԷՔ ԵՒ ԿԸ ՀԱՄՈԶՎԷՔ!
1) Էլեդոնտ, ամուր, գրպանի ժամաց. տղամ. համար, կամ կանանց ժամաց., բաց, անալ. սև պողպատից, բարձր տեսակի. գեղ. օխլոդացրած, շատ ստոյգ ձեւ, խիստ ուղղված ընթացքով։
2) Ամերիկ. նոր ոսկուց զգեցած տղամ. կամ կան. համար։
3—8) 6 հատ զանազ. տես. ըստ լօգնեներ արծաթից, գեղեցիկ շինուածք։
9) ՆՈՐՈՅԹ! Տնային պատենա. տպարան՝ 200-ից աւելի տառերից, թանաք. և կէտագր. նշան. բաղկացած, որով կարելի է տպել ամեն տես. այցեստոմս, բլանկներ, ծրարներ և այլն։
10) ՈՒՆԵԼԻՔ՝ ՏԱՌԵՐԻ ՀԱՄԱՐ։
11 ՏՊԱՐԱՆԱԿԱՆ ՄԱՄՈՒԼ։
12 ՏՊԱՐԱՆԱԿԱՆ ՄՈՒԼԻՐ ՀԱՄԱՐ ՄՂՏԱԿԱՆ ԲԱՐՁ։
13) Գաշեայ պօրտմոնէ փողի համար 6 բաժ., արտաս. ամուր կաշուց, առանձ. բաժ. ոսկէ դրամն. համար մեխանիկ. փականով՝ պարունակելով իր մէջ կնոջի համար գաղանի տեղ։
14) Կառուցէք կնոջ պատուիրողի անուն ազգանունով։
15) ՄԻ ՍՐՈՒԱԿ ԹԱՆԱՔ ԿՆՈՋԻ ՀԱՄԱՐ։
16) ԳՐՊԱՆԻ ԱՐՏՕՄԱՏ ՍԻՆԵՄԱՏՕԳՐԱՖ-ԲՐԵԼՕԿ կանացի հետաքրքր. 2 նկարով։
17—25) ԱՐԾԷՔ. և ՕԳՏ. ԲՆՆԱՏ. զարմանալուր, որ պարունակում է (տես նկարը)—ա) տղամ. մատանի «Գուլէ», շքեղ շինուածք, պարիզ. ձեւի, կեղծ քարով, բ) նոյն տեսակ կանացի մատանի, գ) նոյն տեսակ բրոշ կեղծ քարերով և դ—թ) կանացի գլխի արդուարդ բաղկացած փղոսկրեայ 6 սանրերից, ֆանտաստիկ շինուածք։ Այդ բոլոր ապրանքներն ունենալով առաջին ձեռքից՝ մենք հնարաւոր, ունենք բաց թողնելու թէ էժան և թէ լաւ միւսներից, և ի նկատի ունենալով խոշոր սպառումը՝ մենք նշանակել ենք անհամեմատ էժան գին—ԱՐԾԱՆՑ 5 ր. 90 կ.։ Տղամ. կամ կան. փակ ժամաց. 24 յաւելուածներով 6 ր. 90 կ.։ Ուղարկում ենք պատուէրը ստացած օրը։ Ապրանքները խնդրում ենք հասցէագրել. Экспортному Дому А. Вузееръ, Варшава, Порожная 14—69.
Պահանջները խնդրում ենք հասցէագրել. Экспортному Дому А. Вузееръ, Варшава, Порожная 14—69.
Ց. Գ.—Բիսկ հարկաւոր չէ, որպէսզի չը հաւանած դէպքում փողը վերադարձնում ենք։
Թղթակցութիւնները առանձին գրասրէն գրվում։
(մ. 5, 20, ապ. 3. 15) (В. 4341) 48. 7 6

Типографія „Экономія" Большая Ванкская № 3.